


Կիրոսակոսեան շինարար

18984

Առաջնորդ-արտեր
հարսանիքի և սպասարարի



Կ Պոլիս
1872

149
ՏԱՆԵՐԳՈՒԹԻՒՆ

ԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԵՐԳԵԱԼ

Ի ՂԵՒՈՆԴ ՎԱՐԴԱՊԵՏԷ ՓԻՐԱԼԷՄԵԱՆ

ՄԻԱԲԱՆ Ս. ՈՒԻՏԻՆ ՎԱՐԱԳԱՅ

*Այս ք. է. որը պատկերված է
և այժմ Կարգադրված է*

Ի 1,030 ԸՆԾԱՅԵԱԼ

ԱՐԻԵԱՄԲ ՄԵՆԱՊԱՏԻ ՎԱՐԴԱՆ ԷՖԷՆՏԻ ՊԱՊԻԿԱՆ

ՅՕԳՈՒՏ ԵՒ ՅԱՌԱՋԱԿԻՄՈՒԹՐԻՆ

ՍԱՆԿԻՏԵԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ



891.99

99-65

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԷՓ ԳԱՎԱՅԵԱՆ

— 1872 —



891.99

h-65
41

ՏԱՂԵՐԳՈՒԹԻՒՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ



ԵՐԳԵԱԼ

Ի ՂԵՒՈՆԳ ՎԱՐԳԱՊԵՏԷ ՓԻՐԱՍԼԷՄԵԱՆ

ՄԻՍԲԱՆ Ս՝ ՈՒԽՏԻՆ ՎԱՐԱԳԱՅ



Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵԱԼ

ԱՐԻԵԱՄԲ ՄԵԾԱՊԱՏԻՒ ՎԱՐԳԱՆ ԷՖԷՆՏԻՒ ՊԱՊԻԿԵԱՆ ՎԱՆԵՅՈՅ

ՅՕԳՈՒՏ ԵՒ ՅԱՌԱԶԱԳԻՄՈՒԹԻՒՆ

ՍԱՆԳԻՏԵԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՅՅ



Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ

ՄՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՐԻՄԵԱՆ



Կ. ՊՈԼՍՈ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎՊԵՓ ԳԱՎԱՅԵԱՆ

— 1872 —


8079
200
41

9983

ՈՒՂԵՐԶ

Ա.Ռ.

ՄԵՆԱՊԱՏԻՒ ՎԱՐԴԱՆ ԷՖԷՆՏԻ ՊԱՊԻԿԱՆ



Դուք որ զգրականոչքիչն կը սիրեք
 եւ դպրոցաց յառաջադիմանոչքեան ոգշով
 չափ կ'ցանկայք. սրտոիչ կը համարիմ զայս
ԲԱՐՈՅԱԿԱՆ եւ **ԱԶԳԱՅԻՆ ՏԱՂԵՐԳՈՒԹԻՒՆ**
 Ձեր անոշան ընծայել. իբր առհաշատչեաց
 այս մասին տաժամ Ձեր բարի եւ բուն
 բաղձանաց:

Ոչրեմն ընդունեցէք այս խոշն նոշերը
 եւ շնորհակալեացս հաշատոին:

Ձեր բարեկամ
 ՂԵՒՈՆԻ ՎԱՐԴԱՊԵՏ




1800 12003
 44

Յ Ա Ռ Ս Ղ Ա Ր Ա Ն

Ձե՛մ ուզեր սոյն ՏԱՂԵՐԳՈՒԹԵԱՆՍ հրատարակման վերայ երկա-
րօրէն խօսիլ, որովհետեւ դեռ տպագրութեան լոյս չտեսած. ձե-
ռագրաց օրինակութեամբ գող թէ հանրածանօթ լեալ են ի մէջ
Վանայ և ի Վասսուրական աշխարհի: Վասն զի շատ մի գրա-
գէտ և երգասէր սլարմանիք՝ Ազգային և հոգեւոր հանդիսից մէջ,
օտար ազգաց սին՝ ցոխական՝ և գայթակղեցուցիչ խաղեր չլսելու
համար՝ կանխաւ մեր այս Բարոյական ՏԱՂԵՐՆ օրինակեալ են: Ո-
րոց թէ նիւթոցն ընտրութիւն և թէ իրենց ՚հոփուական՝ տխուր՝
և միանգամայն սրտառուչ եղանակացն ազդեցութիւն. մեծ ներ-
գործութիւն գիտեն գործել յունկնդիրսն: Այս անգամ ընտ-
րանօք խումբ մի մեր այս ՏԱՂԵՐՆ Մեծ Պապիկեանի ՚չնորհիւ
հրատարակ կուգան. ի նպատակ Վանայ Սանդխտեան և Հայկազեան
Ընկերութեանց:

Մեր այլ և այլ աշխատասիրութեանց և նպատակին վերայ
չեմ սիրել կրկնութիւն ընելու. զի արդէն 1871 ին ՃԱՆՍՊԱՐՀՈՐ-
ԴՈՒԹԻԻՆ Ի ՄԱՅՐ ԱԹՈՌՆ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԵՒ ԱՆՏԻ Ի Կ. ՊՕԼԻՍ հրա-
տարակեալ երկասիրութեանս Յառաջաբանութեան մէջ բաւական
երկարօրէն խօսած եմք. ուստի կը հրաւիրեմ բանասէր Ազգայինքն
որ նոյն գրքի գեկուցումն կարգան:

Ձեզ կը մնայ ուրեմն ընթերցասէր և ուսումնասէր Ազգայինք,
որ մի՛ մի՛ օրինակ ըստանալով սոյն գրքերէն, օժանդակէ՛ք այս
բարենպատակ Ընկերութեանց և քաջալերէ՛ք զգործոյս հեղինակն:



Սանդխտեան և Հայկազեան ընկերու-
թեանցն կնիքներով չվաւերացեալ օրինակաց
վաճառելն ու գնելն՝ Ընկերութեանս դէմ
անիրաւութիւն է :



ՏԱՂԵՐԳՈՒԹԻՒՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ՎԱՆՆՑԻ ԾԵՐՈՒՆԻՈՅ ՄԸ ՎԵՐՁԻՆ ԽՕՄՔԵՐԸ

Այս անցաւոր սուտ աշխարհէն ես խարուեցայ,
Տեսակ տեսակ չար մեղքերով հարստացայ .

Կտրիճութիւն գնաց քովէս ա՛խ ծերացայ ,

Այսուհետեւ պիտի մեռնիմ ալ ճար չկայ :

Բարեկամներս դուք ձեր Աստուած եկէ՛ք նստէ՛ք ,
Ալեւորիս վերջի խօսքեր մտիկ արէք .

Իմ քաջութիւն , ուժ , պատիւ , փառքս ամէնքդ գիտէք ,

Ըտտպ կորան՝ հասայ այս գուռ նայէք տեսէք :

Գարնան ծաղկի նման բացուայ փթթեցայ ,

Շատ երկիրներ վաճառական պտրտեցայ .

Հիմայ ձեռքէ ոտքէ անկած մահիճ մտայ ,

Այսպէս օրեր պահեալ դայր ինձ ո՞հ չիմացայ :

Դժուար ցաւօք տանջուիմ այժմ անօգնական ,

Մէկ մի չկայ որ ասեմ թէ պուտ մի ջուր տան .

Հայրս մայրս մեռան՝ աւեր դարձաւ մեր գերդաստան ,

Խեղճ ծերունիս այսպէս ահա՛ մնացի միայն :

Եղբւկ ինձ , ս՛հ՝ աչից լուսէ զրկուեցայ ,

Սկանջներս էլ բռնուեր է խաւառ խցայ .

Աւա՛ղ հիքոյս վրաս խկի դարձող չկայ ,

Փառք քեզ Աստուած այս ի՞նչ օր էր որ ես տեսայ :

Չգայարանքս խարխալեցան ալ չեն բաներ ,

Գլուխս կգժայ մէջէն կրսուի հազար ձայներ .

Քիթս կոծուեր չկարէ շխտակ շունչ տայ առներ ,

Տէր իմ շտառ աղամորդւոյն այսպէս ցաւեր :

Էյ վա՛խ եղբարք ցաւերուս մէջ մտորեր եմ ,

Մահուան օրերս եկին հասան շուարեր եմ .

Երբ հոգիաւ կայնէ դիմացս ես ի՞նչ ասեմ ,

Որ Տիրօջ սուրբ պատուիրաններ կատարած չեմ :

Բշտապ ուրեմն տղայ մը խրկէք տէրտէր կանչէ ,
Ար գայ փութով մոլորեցոյս մի ճար գանէ ,
Վիրաւոր եմ ոգւոյս վրայ մշամ զնէ ,
Յետին թոշակ մարմին արիւն Տեառն ինձ շնորհէ :
Թերեւս Փրկիչ խղճուկ հոգւոյս ինքն ողորմէ ,
Խովու նման յանցանքներուս ներում շնորհէ .
Ապա եթէ արդարութեամբ հ/քոյս դատէ ,
Ես ինքնին այժմ վկայեմ թէ՛ տեղս դժոխքն է :
Ժառանգ էի արքայութեան ո՛հ չիմացայ ,
Հողիս թողի մարմնոյս կամաց հետեւեցայ .
Թէ որ Յիսուս ի վերայ ինձ չդիժարանայ ,
Անքուն որդեր պիտի ուտեն զիս անխնայ :
Ինձի տեսէք ողորմելիս՝ ձեզ խղճացէք ,
Ստուորիս անշահ սիրոյն չլինի խարուէք ,
Չեր մահուան օր դատաստանի ահ մտածէ՛ք ,
Սատանայի շար խրատէն հեռու կացէ՛ք :
Լուսնակի պէս բացուեր էի մէջ աշխարհին ,
Գեղ ու քաղաքն իմ անունով պարծենային ,
Բայց յիմ վերայ կատարուեցաւ խօսքն Աննային ,
Թէ տէր Աստուած է հակառակ միշտ հպարտին :
Խնդիր մը կանեմ ես ձեր մօտէն լսէ՛ք խղճոյս ,
Իս չունեցայ այժմիկ հողեր կտամ գլխոյս .
Թէ որ խոնարհ ու հեզ լինիք կիսնդայ Յիսուս ,
Հանդերձեալ օր զձեզ կդատէ իւր իսկ աջ կոյս :
Ծօ՛ ժիր տղայք՝ ես ձեզ մատաղ աշխարհ սուտ է ,
Ով նորա հետ սիրով կասլուէ՝ իւր տակ փուտ է ,
Դաւիթն եկեր ականջներուս կտրուայ կանչէ ,
Տղոցդ ասա թէ՛ մարդոյ կեանքն իբրեւ խոտ է :
Կտրիճ ատեն կակաչի պէս մարդ կձաղկէ ,
Բայց մահուան հով օր մի նորա յանկարծ զարնէ ,
Որոյ զարնէ կանանչ կտրիճ խլէ՛ տանէ ,
Արդե՞՞ք գիտէք խղճոյ ծնողաց ո՞րքան ցաւ է :
Հազար հազար երիտասարդք ես իմ օրով ,
Տեսի անկան մեծրեցան մահուան հողմով .
Քանի՛ քանի՛ մատաղ հարսունք իւրեանց քողով ,
Լաց ու ողբով կեանք անցուցին փեսայքն ապով :
Չեղ կասեմ ձեզ՝ երիտասարդք զգո՛յճ կացէ՛ք ,
Ստուորիս անշահ սիրոյն չլինի խարուէք .
Մինչ միատեղ յեկեղեցին կերթաք՝ նստէք ,
Քահանայից ձեր հոգւոյ ցաւ փութով բացէ՛ք :

Ղորղ կասեմ թէ որ քո ցաւ նմա ասես,
Ես յուսով եմ պիտի վիրացդ դարման գտնես.
Սարի պէս մեզք ունիս շալակդ՝ վար կղնես,
Եթէ այսպէս մեծ շահ ունիս՝ ի՞նչ կմտածես:

Ճարտար բժիշկն յեկեղեցին նստեր կնայէ,
Դիչեր ցորեկ մեր դարձի դէմ ա՛խ քաշում է.
Երբ որ զզջանք մեր ծանր բեռն ի մէջ կառնէ,
Եկայք առ իս քաղցր լուծս տամ ձեզ՝ մեզ կաւետէ:

Մեք մուրեալքս ինչո՞ւ համար էլ կսպասենք,
Այս աւուր գործն ի՞նչ պէտք է որ վաղուան ձգենք.
Վաղն ո՞վ գիտէ արդեօք ո՞ղջ ենք՝ թէ կննջենք,
Որ այնպէս է՝ օրով առաջ ապաշխարենք:

Յայտնի գիտենք որ մեր անձանց մեք իշխան չենք,
Այսօր առողջ վաղ լեզուակապ անկած կմեռնենք.
Ուրեմն դառնանք մեր մեղքերէն մեր Տէր սիրենք,
Ա՛խ չիինի թէ մեղքերու մէջ մնանք մեռնենք:

Նշանց տուէք մահուան մօտէն ո՞վ պրծեր է,
Գայլ արջու պէս բերան բացեր զմեզ կլլէ:

Ո՛չ մօր դիժար՝ ոչ զաւակի լաց կլլէ,
Ճոչ ու պղտիկ ով որ տեսնայ առեալ տանէ:

Եմալ շմալ նոճի նման սղապ լածեր,
Եարան շարան դնացին պառկան դերեզմաններ.
Գանի՛ բանի՛ խորօտ ազջիկ և նոր հարսներ,
Մեռան և այժմ հող են դարձեր ոտնէ՛ն ի վեր:

Ո՞հ կմտածեմ ինչպէս մարդիկ եկին՝ գնացին,
Գուք եւս շիտակ վիայեցէ՛ք իմ ասածին.

Պարիկ աղան՝ Ղարասաֆարն ո՛ւր մնացին,
Որոց անունն դեռ կզրուցուէ մէջ Հայ Տաճկին:

Չէին պահաս վերագունիցն յետագայներ,
Փիրզալէմեանք՝ Պոչուլք՝ Յարջուլք թէրլէմաղներ.
Աճէմխաչօքն ասենք կոսպարք թէ թօխմախներ,
Որ իմ օրով կիշխէին Վան սոցա ցեղեր:

Պէտք չէ լածերս ալ ձեր զլուխ ես ցաւցնեմ,
Նորա համար պիտի խօսքերս համառօտեմ.

Փտեալ ծերոյս եկիք դուք տես շորհակալ եմ,
Եթէ խրատս եւս միտ պահէք ձեզ շատ կորհնեմ:

Ջանացէք որ կտրիճ լինիք մարմնոյն յաղթէք,
Թէ որ հոգւոյն ներհակ ցանկայ՝ զինքն սաստեցէ՛ք:

Ջայս առնելով հրեշտակք յերկինս խնդացնէք,
Եւ յետ աստեաց արքայութիւն կժառանգէք:

Ռամիկ ժարդիկ երբեմն երբեմն առ ձեզ կանչէ՛ք ,
Ձեր կարեաց չափ նոցա բարի խրատ խօսէ՛ք .
Ի՛նչ որ դիտէ՛ք կորթ ախանջաց չխնայէ՛ք ,
Որ սրբոց հետ զատաստանին պսակ առնէ՛ք ,

Սիրուն եղբարք այս մէկ խրատս ալ միտ պահէ՛ք ,
Ամէն բանէն առաջ ձեր տէր Աստուած սիրէ՛ք .
Եղբայրատէր լերո՛ւք բնաւ խսկի նախանձ չանէ՛ք ,
Այսպէս կատեն մեզ միշտ օրէնք և մարգարէք :

Վերջ տանք բանիցս՝ փոքր մի ես իմ մեղս մտածեմ ,
Տէրտէրն եկաւ՝ քիչ մ'ալ նորա հետ զրուցեմ .
Մէկ ժամ միջոց տուէ՛ք հիքոյս ձեզ կկանչեմ ,
Վերջ օրհնութիւնս իմ բոլորիդ տալով կմեռնեմ :
Տէր հայր ո՛ւր ես . արեկ իմ կուշտ հանգիստ նստէ՛ ,
Որ քո խեղճ ծեր իւր բոլոր մեղք խոստովանէ .
Ճար մ'ունիս տե՛ս հոգիս ներսանց կաղաղակէ ,
Արդեօ՞ք Փրկիչ պիտի մեղացս ներունն շնորհէ :

ՄԻԻԹԱՐԱՆՔ ԳԱՀԱՆԱՅԻՆ

Բարուն բարին է՞յ ծերունի յաշխարհ իջաւ ,
Մարդկանց համար մաքուր կուսէն մարմին առաւ .
Մկրտուելէն վերջ մոլորեալ ոչխար դտաւ ,
Չարէն կանչեց . աւագակ հետ դրախտ տարաւ :
Յնծանք ուրեմն բնաւ խսկի երկիւղ մ'աներ ,
Հաղորդեցար քիչ մ'ալ օրհնէ՛ Հայկայ լաճեր .
Մնաս բարեաւ , տո՛ւր ինձ հրաման կերթամ ժամ վեր ,
Տղայքն եկին խօսէ՛ նոցա քոյդ օրհնութքներ :

ԾԵՐՈՒՆԻՆ

Իիւժուեցայ ես իմ ցաւերէն տղայք թող դան ,
Վերջի օրհնութքս առնեն , ապա աներն երթան .
Յխուս Փրկիչ մաղթեմ սոցա սուր երկար կեան ,
Մեռնելէն վերջ արքայութեանդ արա՛ արժան :
Փրկիչ Յխուս սուրբ Գարբիէն քովս ուղարկէ ,
Որ գայ հոգիս աւանդելով առ քեզ բերէ .
Մարմինս ալ թո՛ղ դնեն տապան որդ գայ ուտէ ,
Մինչ յարութեան անուշիկ փողն զնա կոչէ :

ԲԱՆՔ ԻՐԱՏԱՍԷՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ

Քառորդի մը չափ մեր ծերունին միշտ աղօթեց ,
 Քանի հեղ եւս իւր դէմքն երես խաչակնքեց .
 Երեք անգամ ցայր ձայնիւ Յիսուս կանչեց ,
 Հոգիս քեզի կյանձնեմ ասաց՝ աչքեր խփեց .

Օրհնեալ ես Տէր՝ որ չես մոռնար քո ծառայներ ,
 Մեք մեր աչքով լուսահողւոյն տեսինք ցաւեր .
 Համբերութիւն տուիր իւրեան , տոկայր միշտ ծեր ,
 Եւ չէր յիշէր բողբոջին մարմնոյն ցաւեր :

1860 սեպտ. 20 ի վարագ

ԲԱՆՔ ՎԱՐԱԳԱՅ ԱՌ ՆԱՀԱՊԵՏ

ԵՒ

ԱՐՁԱԳԱՆՔ ՆԱՀԱՊԵՏԻՆ

ՎԱՐԱԳ

Լա՛ց Նահապետ գիշեր ցորեկ անմխիթար ,
 Ե՛կ ու նստէ դողդոջիւն ձեռքդ ա՛ն քո քնար .
 Զարկ ու երգէ՛ արտասուելով ցաւակցաբար ,
 Թող արձագանք տան քո ձայնին սար ձոր ու քար :
 Հայրենասէր առաքինիքն առ քե՛զ կանչէ ,
 Արտիս ցաւերն ամէն անոնց զատ զատ պատմէ՛ .
 Հիմայ բե՛ր թուղթ , գրիչ , մերան ասածս գրէ՛ ,
 Ի՛նչ որ տեսայ ես յառք պատիւ ի սկզբանէ :

Տա՛ր ստորոտս վարի վարագն՝ ասա՛ տպնն .
 Ոսկեգիտտուր Արժւոյ թեւին վրայ դնեն .
 Իմ՝ գաղթական սիրուն որդւոցս ա՛խ ուղարկեն ,
 Իցէ՛ թերեւս նոքա հիբոյս ճար մի գտնեն :

ՆԱՀԱՊԵՏ

Մայր խրթնացեալ ես քո ցաւերը ո՛ր մէկ պատմեմ ,
 Կիսակործան սուրբ տաճարներդ երբ տեսանեմ ,
 Քեզ այս վիճակ չեկող տեսող շատ երանեմ ,
 Աւա՛ղ և ողբ խաւար աչացս զոր տեսանեմ :

Այն Նահապետ խեղճ Սարկաւադ թող շուտ մեռնէր ,
 Եւ ոչ այսպէս աւերակներդ գար ու տեսնէր .
 Քո սրտառուչ լաց ու կական մտիկ չանէր ,
 Թերեւս կարծեմ իւր երջանիկ պիտի ասէր :
 Յաւերդ թուել , ո՛հ , չեմ կարող սուանց լալու ,
 Մի բարկանար ուրեմն հիքոյս չեմ յանձնառու .
 Եկի յայս տեղ ողորմեւլոյդ ես այցելու ,
 Արդ հրաժարիմ երթամ ի քիւն լալով հեռու :
 Բանաստեղծներ թող գան նստին շարան շարան ,
 Հտրաց բերեն քնար՝ ջութակ և նուագարան .
 Ողբեր շինեն ասեն , զարնեն , լան ու դուան ,
 Միայն խնդրեմ ինձ երթալու շնորհէ հրաման :

ՎԱՐԱԳ

Այ Նահապետ ականջներդ բաց խրատս լսէ՛ ,
 Ինչ որ կասեմ ամէն անոնք կարդաւ գրէ՛ .
 Ձեր ցեղ գիտեմ ես փիրՂԱԼԷՄ իսկզբանէ ,
 Աշօթս վրադ լինի տղաս Տէր քեզ օրհնէ :
 Մօր քո ձայնին ե՛կ ու լսէ՛ կա՛ց հնազանդ ,
 Չայրիացեալս հերթիք նեղես , զի եմ հիւանդ .
 Պատմէ՛ ինչպէս օրեր հասուց զիս դժնեայ բաղդ ,
 Որ ցաւակէց լինին հիքոյս Տփիսիա Բիւզանդ :

ՆԱՀԱՊԵՏ

Ասա՛ մայրիկ ես քո ձայնին կամ հպատակ ,
 Ձքեզ սիրողաց պիտի լինիմ բոթի հրեշտակ .
 Ձիս ընդունէ՛ ա՛ռ ու պահէ՛ քո հման տակ ,
 Ձլինի ուրեմն բարկանաս ինձ՝ քո եմ զաւակ :
 Ձէի ուզեր որ քո ցաւեր դու բանայիր ,
 Ձանցեալ գնացեալ փառսդ յիշելով հառաչէիր .
 Խորհուրդս չգիտցած ինձի վրայ բարկանայիր ,
 Խօսէ՛ մայրիկ պիտի գրեմ այժմ ժիր ու ժիր :

ՎԱՐԱԳ

Վե՛հ Գալիլեան տեսնա՞ս այս իմ սեւ պարթեւ սար ,
 Գողգոթային փառաց հասաւ համ-հառասար .
 Առ ինքն պահեց կենաց սուրբ Փայտն երեք չորս դար ,
 Որուն սպաս միշտ տանէին սրովրէից պար :

Թագաւորացն օրիորդներ Հոովմայ եկան ,
Ծաղիուն վայրերս տեսանելով հոս օխեցան .
Կողոպտելով հորաց բերին այն սուրբ Նշան ,
Որ այժմ սիրով գրկեր պահէ հնաշէն վան :

Կուսանք երբոր վաղարչապատ զաղթեալ գնացին ,
Ի սէր Փրկչին իրենց արիւն հոն թափեցին .
Այն Խաչին մաս Գալիլեայի աւանդեցին ,
Պաշտօն տանել քահանայից պատուիրեցին :

Արդ իմ Փեսայն Հայաստանին ողորմեցաւ ,
Երբ սուրբ արիւն օրիորդաց հոտոտեցաւ .
Տանն Արամեան պայծառ արեւ մ'ալ ծագեցաւ ,
Ձի վիրապէն Լուսաւորիչ Հայր մեր պրծաւ :

Ելաւ Տրդատն բժշկելով առողջացուց ,
Եւ մոլեգնեալ նախարարներն զգաստացուց .
Չորեքտասան բիւր ժողովուրդ յԵփրատ լեցուց .
Մկրտելով զանոնք հոգևով պայծառացուց :

Հայաստանի կուսուռններն ամէն քակեց ,
Եւ չար դեւերն անոնց մէջէն ողջ հալածեց .
Կաթուղիկէ Նոր Սիոնի հիմն սկսեց ,
Հազար հազար եկեղեցի՝ մատուռ շինեց :

Ասոնց մէջէն մէկն ալ ես եմ պատմող բանիս ,
Որ պարծանաց պարծանք եղայ Տոսպ գաւառիս .
Ա՛հ մինչ քնքուչ Փեսայն սիրով մնայր առ իս ,
Ամէն բերան վա՛շ կարգալով օրհնէին զիս :

Ո՛հ կմտածեմ՝ հոռաչելով այն չքնաղ դար ,
Որ սուրբ Նշանն յայտնի եղեւ փառօք պայծառ .
Լոյս կտրեցաւ իմ չորս բոլոր սար , ձոր ու քար ,
Շատ հրեշտակներ յերկնից իջան այս հսկայ սար :

Արդար Թօթիկ հետ իւր Յովել աշակերտին ,
Տասն աւուր չափ նօթի քաղցած աղօթեցին .
Տիրոջ քովէն արտասուելով զայս խնդրեցին ,
Հանել ի լոյս զպատուական Աւանդն անդին :

Տէրն լսելով հսկողներու ջերմ աղօթից ,
Գալիլեայի գլուխ պատուեց երկու դեհից .
Խաչն դուրս հանեց՝ արեւ մտաւ ճառագայթից ,
Հիւանդն ժրէր սուրբ Նշանի անուշ հոտից :

Թռաւ սարէն եկաւ նստաւ իմ սուրբ սեղան ,
Շատ հրաշքներ նոյն միջոցին տեսնուեցան .
Լուսաւոր սիւնք յերկնից յերկիր երկոտասան ,
Երկար ատեն երեւեցան Վասպուրական :

Գրոհ տուեալ ամէն կողմէն հոս վազեցին ,
Հեղեղի պէս գիս ամխոխիւք ողողեցին .
Խուսի խուսի եկան կենաց սուրբ Փայտն համբուրեցին ,
Ուրախութեամբ իրենց աներ թողին գնացին :

Ես կգովեմ ջերմիկ հաւատ վարդ պատրկին ,
Եւ անոր պէս շատ իշխանաց Հայոց աղբին .
Որ ի պատիւ ամենայաղթ սուրբ Նշանին ,
Զիս ի հիմանց նոր ի նորոյ նորոգեցին :

Կարծեմ շատ մարդ այս միջոցին հրածարեցան ,
Թողին զաշխարհ կենաց Փայտին սպաս մտան .
Թօթիկ սուրբ Հօր բարի վարուցն նախանձեցան ,
Իմ լեւ ու ձոր կրօնաւորօք հարստացան :

Ես ան ատեն թագուհւոյ պէս պարծենայի ,
Վասպուրական վանօրէիցն ալ իշխէի .
Իմ զաւակներս գիրկս գրկած կվարժէի ,
Կաթ իմատից անոնց յօծար կջամբէի :

Սիրուն փեսայս զողորմելիս դեռ կսիրէր ,
Եւ ոչ այսպէս ձեռաց թողած կայի անտէր .
Միաբանիցս կամաց կամաց պաղեցաւ սէր ,
Փախան ամէնք դիս թողուցին աւեր անտէր :

Ահ Նահապետ ո՞ւր այն փառքերս եկան գնացին ,
Թշուառութիւնք զհետ նոցա յաջորդեցին .
Անկայ ի ձեռս աւաղակաց կողոպտեցին ,
Ողորմելոցս բնաւ երբէք չխնայեցին :

Պիղծ ոտքերով իմ սուրբ երկիր կոխկոտեցին ,
Աւագ սեղանն իւր հանդերձից մերկացուցին .
Ի՛նչ որ իմ էր ամէն բռնի , ա՛խ , գերեցին ,
Մինչեւ անգամ սուրբ հիմունքս եւս տապաւեցին :

Փայտատն չկրցաւ քար մի քակել իմ պատերէն ,
Մրճոյ բերանն ալ բթացաւ միշտ զարնելն .
Բայց պակսեցաւ ոյժս այս վերջի չար հարուածէն ,
Որով քարերս ամէնն ցրուեց վառօդ մէկէն :

Ա՛խ Նահապետ կարճ ի կարճոյ ասի ցաւերս ,
Զորս կողմն ամէն ցրուած տեսնաս հման քարերս .
Ողբեր չինէ , լա՛ց ու պատմէ՛ Հայոց աւերս ,
Արդեօ՛ք կարծես , որ գթան յիս Հայ զաւակներս :

ՆԱՀԱՊԵՏ

Անշուշտ գիտեմ բնաւորութիւն Հայոց աղբին ,
Քեզի համար պիտի չխնայեն իրենց գանձին :

Անհո՛գ կեցի՛ր , ալ մի՛ տրտմիր դու այս մասին ,
Քեզի պէս շատն արդէն հիմանց նորոգեցին :

Մօրդ այցելու գիտեմ կուգան գաղթեալ ձաղերդ ,
Հայրենասէր ողորմածներն իրր գարնան գետ .
Կշինեն գքեզ քան զառաջինն չքնադակերտ ,
Մօրդ խնդակից լինի այն օր խեղճ , Նահապետ :

ՎԱՐԱԳ

Ա՞ն Նահապետ ասածներուդ այժմ հաւատա՞մ ,
Եթէ դարձեալ զամայութիւնս յիշեմ ու լամ .
Խօսէ՛ տղոցս հիւանդ եմ ես երկերիւր ամ ,
Թէ տես չգան՝ պիտի մեռնիմ՝ ո՛հ տարածամ :

ՆԱՀԱՊԵՏ

Երթա՛յ չգայ այն բարբարոս աւերիչ դար ,
Որ քեզ արար հողերուն հետ համ հաւասար .
Սակայն գովեմ ես զայս ներկայ նորոգիչ դար ,
Որ անկապուտ կեանս պիտի տայ քեզ անպատճառ :


ՎԱՐԱԳ

Տուած յուսովդ քիչ մը ցաւերէս հանգստացայ ,
Ես ինքնիրենս մխիթարել ալ սկսայ .
Չամայութիւնս ոչ եւս յիշեմ՝ մի՛ լար տղայ ,
Թող մեր խօսքին ինքնին Երկինք լինի վկայ :

ՆԱՀԱՊԵՏ

Ողորմելիս որ այս խօսքերս հոգւով լայ ,
Աչօքս նաեւ զիւր նեղութիւնան ամէն տեսայ .
Խեղճն եղեր է ոտնէն ի վեր տակն ու վրայ ,
Ա՛լ չկրնալով լացս բռնել թողի եկայ :

24 Յունուար 1860 . Ի Վարայ



ՄԽԻԹԱՐԱԿԱՆ ԲԱՆԻՔ

ՏՈՍՊԵՅԻ ՆԱՀԱՊԵՏԻՆ ԱՌԱՆԻ ՔԱՂԱՔՆ

Նահապետին ձեզ ճար չկայ խեղճ Անի ,
Որ գայ հիւանդ ողորմելոյդ հոգ տանի .
Ես հիւանդին կուզեմ տեսնալ յիրաւի ,
Ի՞նչու կառնեմ Տիրոջ մօտէն երանի :
Բայց ի՞նչ օգուտ Տիխիսուռ մէջ պանդուխտ կամ ,
Իմ ցաւ թողել տառապելոյդ ցաւ կուլամ .
Չմեռ պատեց չտար ճամբայ առ քեզ դամ ,
Ուստի սակս այն ես կմաչիմ յարածամ :
Ո՞հ ինչ ասեմ այն կիրակոս չէրէցին ,
Որ հէնց Յուդան մատնիչ եղեւ խեղճ ազգին .
Թշուառական է՞ր չգթացիր քո Անին ,
Փոխեցիր հետ կտոր մ'անարդ արծաթին :
Կամ դու է՛յ վեստ մատնիչ Սարգիս փառասէր ,
Խշխանութիւնդ զոր ունէիր քեզ բաւ չէ՞ր .
Հայոց մեծաց Գազիկ արքայն ապա է՞ր ,
Անխիղճ Յունաց ձեռք մատնեցեր քո բուն տէր :
Այսքան տարի ի՞նչու պիտի ձեր վրայ ,
Խեղճ Հայոց ազգ տիւ ու գիշեր վա՛յ կարդայ .
Ձեր պատճառաւ Անին դարձեր տակ վրայ ,
Լինէիք ոչ բարեաւ Հայոց դուք տղայ :
Քանդող եղէք Հայաստանին յիրաւի ,
Մարդ ձեր արարք՝ որ մտածէ կշիւարի .
Ինչո՞ւ եղաք եղբայրատեաց թշնամի ,
Խեղճ Հայոց ազգն այլոց արիւք ճորտ գերի :
Շահ մ'ըստացաք՝ կամ ի՞նչ տարաք դուք ձեր հետ ,
Անին ապա ընդէ՞ր արիւք բուռց կերտ .
Ձեզ ողորմի բերանս չբռնե՛ր ասեմ սերտ ,
Անի քո ցաւ կմեռցնէ Նահապետ :
Անիծեալ օր՝ որ մայր ծնաւ Արիսաւան ,
Այն որ քակեց մեր նազելի Հայաստան .
Ա՛խ հէգ Անի սա քեզ եղեւ չար սատան ,
Խղճոյդ տիրեց՝ որդիքդ արաց ցիր ու ցան :

Ես քեզ դու ինձ լինիք Անի միտիմար ,
իցէ թերեւս Աստուածն անէ մեզ մի ճար .
Դու անտէրունջ ես եւս պանդուխտ սեւ շուար ,
Գիտենք մեր Տէրն զմեզ այսպէս թող չտար :

Անի Անի քեզ մատաղ եմ համբերէ՛ ,
Այս նեղութիւն դուն սիրով տար ու կրէ՛ .
Տէր զթած է օր մի վրադ լոյս կաննէ ,
Յաւդ բուժելով դքեզ մահճէդ կհաննէ :

Եթէ յունվար զիս նեղէր ո՛չ կուգայի ,
Քեզ տեսնալով նորէն Բիւզանդ կերթայի .
Ուրոյն ուրոյն ներկայ վիճակդ դիտէի ,
Գաղթեալ որդւոցդ լալով նստեալ պատմէի :

Ա՛խ քո տեսուն շատ կարօտ եմ խեղճ Անի ,
Մայրաքաղաքդ Բագրատունեաց դեղանի .
Յիսուս Փրկիչ լուր ազերս քոյդ ծառայի ,
Խեղճ Անիի տեսոյն արա՛ արժանի :

Երթամ տեսնամ մեր խանձարուր եղկելիս ,
Որ իւր սուրբ սէր միշտ հանապազ նեղէ զիս .
Ապա թէ ոչ երիտասարդ ծաղիկ տիս .
Ա՛խ անելով պէտք է մաշի մէջ երկրիս :

Տեսնամ Անին Բագրատունեաց ձեռոց տուն ,
Որոյ վշտեր աչքերացս ո՛ւր կտրեր քուն .
Թէ շուտ չտեսի պիտի մեռնիմ ես իսկոյն ,
Ա՛խ ու ցաւով ձգեմ երթամ իմ հարց չուն :

Տէր մինչեւ յե՛րբ ողորմելի ազգ Հայոց ,
Գիշեր ցորեկ Անին ապով անէ՞ կոծ .
Արդ կազաչեմ իւրեան սրտին բուժէ՛ խոց ,
Չեռքէն բռնէ ա՛ն տա՛ր փութով իւր մօր ծոց :

Հերիք է Տէր թիւրք ու պարսիկ մեզ նեղեն ,
Մեր սուրբ հաւատքն ծաղր առնելով այսպանեն .
Անիժամ ազգ կտեսնաս մարացն ի՞նչ կանեն ,
Կողոպտելով մեր ստացուածք , կտանեն :

Անքուն ակամբ գիտեմ կը իտեմ Տէր հիմայ ,
Թէ Հայն որպէ՛ս նեղեն տքա անխնայ .
Տէր կազաչեմ փոքր ի՞նչ գթա՛ մեր վրայ ,
Ապա թէ ոչ էլ տանելու ճար չկայ :

Հազարաւոր եկեղեցի մենաստան .
Սոցա ձեռօք հիմնայտակ քակուեցան ,
Եւ ոմանք եւս ահա՛ մզկիթ փոխուեցան ,
Որ Մահմէտի խորդ կուրանին լսուի ձայն :

Տէր Հայաստան բաւ է մնայ ամայի ,
Եւ մի' թողուր այլոց լինի յար գերի .
Հայ մ'որ նստէ իւր մտածէ փառս նախնի ,
Անշուշտ գիտեմ պիտի վա՛յ տայ իւր բախտի :
Ուրեմն Փրկիչ անտէր հօտիդ բառաջ լո՛ւր ,
Այս կրակիս վրայ ցանէ՛ շուտով ջուր .
Ճարիկ մ'արա՛ , փթացո՛ Տէր սոցա սուր ,
Որ չլինի թէ մեր ազգ ջնջեն զուր ի զուր :
Ու խտեմք պիտի այսուհետեւ քոյդ հրամանն ,
Սիրով առնել ս՞րքան ձեռքերս ունիք ջան .
Ա՞խ Տէր Յիսուս ուստի եղանք ցիր ու ցան ,
Մեզ նոյն տեղաց կրկին արա՛ դու արժան :
Երթանք շինենք այն աւերակ դարպասներ ,
Զորս քակեցին Հայաստանի ոսոխներ .
Մեր Տէր սիրենք բոլոր սրտէ և զընկեր .
Փառք տանք՝ նմա նստենք հանգիստ մեր տներ ,
Ահա այսպէս սիրուն Անի ազգ ողջոյն ,
Քեզի համար Տիրոջ մօտէն խնդրէ սոյն .
Թէ հերի՛ք տաս խեղճ Անիին նեղութիւն ,
Մեզ առ տար քով՝ մէկտեղ անենք ցնծութիւն :
Անի՛ Անի հիւանդութեանդ վերջ հատեր ,
Բարերարին սիրտ քո վրան քաղցրացեր .
Ահա՛ սուրբ սէրդ ինկեր վառէ քո լաճեր ,
Պիտի դան քեզ՝ կրկին մահճէդ հանեն վեր :
Այսչափս հիմայ քեզ տուեցի աւետիս ,
Որ լսելով ուրախացեալ օրհնես զիս .
Արդ ես պիտի փոխել տամ այժմ չուն դրջիս ,
Կռունկին եւս փոքր բան ունիմ ասելիս :
Աւետատու Կռունք Հայոց աշխարհին ,
Մատաղ եմ քո կղու կղու սուրբ ձայնին .
Տես ի՛նչ կասէ քեզ խղճալի Տոսպեցին ,
Որ կըստիփէ ազգի կողմէն մայր Անին :
Գու որ սլացեալ յերկրէ յերկիր կճեմես ,
Շատ քաղաքներ լուր կտանես կրեբես .
Պանդխտիս լուրն ուրեմն չառնես դու անտես ,
Այս կարճ խօսքերն փութով ազգին հաղորդես :
Ասա՛ թող դան Անին իւրեանց կանչում է ,
Ա՞խ անորդի հերի՛ք թողնէք իւր բաւ է .
Գիշեր ցորեկ նա ձեզ համար կարտասուէ ,
Մէկ մի չկայ որ հէգ այրին սփտիլէ :

Երբ խօսք պրծաւ հէզ Տոպեցի Նահապետ,
Կռուենկն ամէն միտ պահելով եղաւ սերտ .

«Մնաս բարեաւ ասաց խղճոյս բունեց երթ .»

Ասի՛ գնա՛ սիրուն կռուենկ՛ Տէր քեզ հետ :

1860 Դեկտ. 17 Ի Տփլիսի :

ԱՊԱՇԱԻ Ի ՎԵՐԱՅ ԱՆՅԵԱԼ ԱՒՈՒՐՑ

Մատաղ օրերն այն՝ իմ ծաղիկ կենաց ,

Ո՛հ լ՛նչպէս չողան փութով յինէն բաց .

Այժմիկ նոր նոցա համար փոշմանուած ,

Աղի արտասուօք նստեր կամ ի լաց :

Վասնզի ծերութիւն եկեր զիս պատեր ,

Իբրեւ աղ՛ արձիճ վրաս ծանրացեր .

Ոյժ՛ կարողութիւնս ձեռքէս կողոպտեր ,

Զիս ուրիշներուն կարօտ է ձգեր :

Քիչ օրէն պիտի երթամ դերեզման ,

Ինչպէս գնացին մեր հարքն ամենայն .

Նոր զգացի թէ աշխարհս է ունայն ,

Մինչեւ իմացայ բուսաւ իմ եւս բան :

Քանի որ կտրիճ՛ էի ես իսկի ,

Խեղճ՛ աղքատ հողիս բնաւ չլիչեցի :

Ոչ պաշար՝ ոչ իւղ ինձ պատրաստեցի ,

Հասկա ունայն տեղ օրերս անցուցի :

Հիմայ զղջացեր՛ հող կուտամ գլխոյս ,

Թէ է՛ր չճարեցի ես պաշար հողւոյս :

Զերմ սիրով իսկի չիմնուեցի Յիսուս ,

Ի՛ցէ թէ՛ գթար ի վերայ հիքոյս :

Եղբայր սիրելի՛ միտ դիր իմ բանին ,

Տե՛ս ինչ կասէ քեզ խղճուէ հոսպեցին .

Քանի որ ծիլը ես՝ օրերդ թանկագին ,

Փուճ տեղ չանցուցես՝ այլ դործեա՛ բարին :

Առաքինութեան լե՛ր դու սիրահար ,

Խեղճ՛ հագուողք արա՛ օրով առաջ ճար .

Մահուանդ օրն յիշտա՛ . կազմեա՛ քեզ պաշար ,

Որ պիտի երթաս ճանապարհ՝ երկար :

1863 Դեկտեմբեր 20 . Ի Վան :



Ի ԴԱՐՁՆ ԱՆԱՌԱԿԻՆ

Թողեալ զտունն իմ հայրենի անտրտում վայրն Ագինայ ,
Զբաժինս յընչիցդ պահանջելով՝ առեալ ի Քէն մեկնեցայ .
Ընդ արբեցողսն՝ և ընդ մոլիսն՝ զսցնս վատնեցի անխնայ ,
Եւ չար կրիցն իմ ո՛հ եղէ , կամակատար պաշտօնեայ :

Լո՛ւր ողբալոյս դառն աղաղակ ,
Հա՛ս յօգնութիւն ինձ Հա՛յր արադ .
Ձնջեա՛ զյանցանս՝ արա՛ ճարակ ,
Ձի եմ որդի քո Անառակ :

Այնուհետեւ զիս կաշկանդեաց աղքատութեան դաւաղան ,
Այն չողոքորթ սեղանակիցքս՝ կարօտեալս վաղ ուրացան .
Եւ սովն սաստիկ ողորմելոյս իսպառ իսպուռ իբր գաղան ,
Տիրապետեալ արար այո՛ խողաց խմբին պահասան :

Լո՛ւր ողբալոյս դառն աղաղակ , եւայլն .
Յանկանալով փափագէի ընուլ զքաղցս յեղջերէն ,
Այն որ խողացն էր կերակուր շնորհեալ նոցին յիշխանէն .
Բայց և այսու ոչ ոք տայր ինձ , նուաղելով ՚ի քաղցէն ,
Անկարեկից յերկիր անկայ՝ թալկանալով ես անդրէն :

Լո՛ւր ողբալոյս դառն աղաղակ , եւայլն .
Յանկարծակի ճոխ Հօրն իմոյ բարիքս եկին ի յուշ իմ ,
Թէ քանի՛ նա ունի վարձկան , իւր հացալից մտերիմ .
Ես աւասի՛կ աստ սովամահ նքողելով կորընչիմ ,

Արդ՝ յարուցեալ գնացից լալով առ Ողորմած սուրբ Հայրն իմ :
Լո՛ւր ողբալոյս դառն աղաղակ , եւայլն .
«Մեղայ յերկինս և առաջի քո ասացից ողբաճայն ,
«Չեմ արժանի կոչիլ որդի , այլ արա՛ զիս իբր վարձկան » .
Թերեւս հիգոյս ողորմեացի , ըստ իւր անբաւ գթութեան ,
Թէ եւ գիտեմ ստոյգ ես իւր շնորհացն եմ յոյժ անարժան :

Լո՛ւր ողբալոյս դառն աղաղակ , եւայլն .
Չայս ասելով անդ Անառակն՝ բոկոտն ի չու անկանէր ,
Զմերկութիւն իւր գիտելով՝ յաւէտ ի սուգ համակէր .
Մինչ այսպիսի դառն արտասուօք՝ զանձն իւր քարամբ կոչկոչէր ,
Եւ նոյն ժամայն Հայրն երկնաւոր որդւոյն հանգէպ ելանէր :

Լո՛ւր ողբալոյս դառն աղաղակ , եւայլն .
Ծնողբար գորովանօք՝ առեալ զնա ի գիրկ իւր ,
Օտարացեալ դժբախտ որդւոյն՝ տայր անձկանօք սուրբ համբոյր .
Բայց նա կրկնէր «մեղայ յերկինս» Հայրն ցնծութեամբ ո՛հ ընոյր ,
Եւ գնանէք. Եշն պարարակ յԱնառակին կերակուր :

Լո՛ւր ողբալոյս դառն աղաղակ , եւայլն .

Անդ հրամայէր բարեգութ շայրն, իւր ծառայից և զօրաց,
Աւ ի կազմել զօր խորխուութեան, յեթերս վերին անմոռաց.
Թէ պարտ է ձեզ պարուք տօնել զԱնառակիս վերադարձ,
«Ձի կորուսեալն իմ գտի այժմ, մեռեալ էր սա և եկաց»:

Լ'ուր ողբալոյս դառն աղաղակ, եւայլն,
Ըստ հրամանի Տեառն իւրեանց՝ նոյն օր հանդէս կազմեցին,
Զգիւտ մոլորեալ Անառակին բերկրապատար տօնեցին.
Զանյիշաչարն օրհնեցին շայրն, որ ընկալաւ զիւր որդին,
Եւս և զգալուստն վաղվաղակի՝ երէց եղբօրն ծանուցին:

Լ'ուր ողբալոյս դառն աղաղակ, եւայլն,
Երէց որդին լսելով զայս ի բարկութիւն մտանէր,
Վշտանալով ընդ արարս Հօրն ի տուն անգամ դալ չկամէր.
Շայրն ընդ առաջ ելեալ որդւոյն համոզելով աղաչէր,
Իմ ամենայն քոյդ են բարիք՝ ասելով յարին մուծանէր:

Լուր ողբալոյս դառն աղաղակ, եւայլն,
Եղբայր եղբօր մինչ յանդիման ելանէին երկոքին,
Համբոյր սիրոյ միմեանց տային, պայծառ դիմօք խնդադին.
Չաչակերտիլ ատելութեան՝ ընդ միմեանս ուխտ եղին,
Եւ կալ հլու ականարկութեանց իւրեանց զթած Մնօղին:

Լուր ողբալոյս դառն աղաղակ, եւայլն,
Տեսանելով զեղբարց սուրբ սէրն Ամենակալ Տէր արքայն,
Սրբախութեան քաղցր արտասուք՝ յայտից յալիս թորեցան.
Անդ բացեալ ձեռսն օրհնեաց զորդիս՝ կալ ի սէր իւր անսասան,
Եւ վայելել զերկնից բարիս՝ ընդ իւր ի փառսն անվախճան:

Լ'ուր ողբալոյս դառն աղաղակ, եւայլն,
Մեք եւս եղբարք ի յուշ ածցուք զերկնաւոր Հօր զթութիւն,
Մեղայ յերկինս միշտ կրկնելով՝ ընդ Անառակ իւր որդւոյն.
Գիտեմք անշուշտ մեզ եւս զթայ՝ ձօնէ մեղաց թողութիւն,
Ի հանդերձեալն առնէ արժան՝ իւր սուրբ փառացն և տեսոյն:

Լ'ուր ողբալոյս դառն աղաղակ, եւայլն,
Ի յոյս դարձի մեղաւորաց վարս Անառակ որդեկին,
Ի գիր առ ի երգելով զայն՝ ինձ նմանեաց կաթողին.
Եւ մինչ շահիս ի սմանէ՝ յիշեա՛ զՂեւոնդ Տոսպեցին,
Տ'ուր զողորմի ողորմելոյն, մի՛ զանց առներ վշտալին:

Լ'ուր ողբալոյս դառն աղաղակ,
Հա՛ս յօգնութիւն ինձ Հայր արագ.
Ձնջեա՛ դյանցանս՝ արա՛ ճարակ,
Ձի եմ որդի քո Անառակ:

1870 Մարտ 25 ի Կ. Պօլիս:

ՊԱՐՍԱԻԱՆՔԻ ԲՈՒՆԱԿԱԼԱՑ ԱՇԽԱՐՀԻՍ

ԵՒ

ՅՈՐԴՈՐԱԿ ԱՌ ՀԱՆԴԵՐՁԵԱԼ և


Այս աշխարհիս խաբերայ փառք իբրեւ երազ կ'անցանէ ,
 Սողոմոնի ասածին պէս իւր ամէն բան ունայն է :
 Շատ ինքնակալ թագաւորներ եկին աշխարհ գնացին ,
 Իրենք հողի մէջ թաղուեցան՝ լոկ անուններ թողուցին :
 Քանիներուն յիշենք կարգաւ՝ թէ վարքերնին՝ և թէ գործ ,
 Որոնք երկիր սարսեցուցին՝ վերջ վերջ առին մահուան փորձ :
 Ո՛ւր է արդեօք Կիւրոս հզօր՝ կամ ո՛ւր մնաց Տիգրան սէգ ,
 Փոշի դարձան այս դիւցազներ՝ հիմայ չմնաց անոնց մէկ :
 Ո՛ւր մնաց այն քաջ Աղեքսանդր՝ բոլոր աղգաց տիրապետ ,
 Մեռաւ շուտով և թաղեցաւ՝ իւր փառք կորաւ նորա հետ :
 Ասոր օրով Տուն թորդոսեան ո՛հ զրկեցաւ իւր գահէն ,
 Աւ դադրեցաւ թագ կապելէն , երբոր անկաւ քաջ Վահէն :
 Արտաշէսին յիշենք այն խօսք՝ որ իւր վրայ կ'ողբայ ,
 « Աւա՛ղ փառացս անցաւորի » կ'տսէ , ձիէն վար կուգայ :
 Հռոմայեցոց ինքնակալներ . մեծ Յուլիոս , Օգոստոս ,
 Բարձր գահէն վար զլրբեցան հասան մինչեւ շիրմին փոս :
 Ո՛ւր քո հրաման , ո՛ւր դահիճներդ , մանկակոտոր Հերովդէս ,
 Չայնդ Աստուծոյ կարծեց խուժան՝ երբ խօսեցար 'ի հանդէս :
 Դուն փառք չետուր քո Արարչին , որդնալից սատկեցար ,
 Շունի նման քաշիւտելով՝ աղբերու մէջ թաղուեցար :
 Ո՛ւր ես արդեօք չնէ՝ տեսուիր՝ մարդադիշատ Լանկ թամուր ,
 Ա՛խ , Ասիան լափեց՝ վառեց բռնաւորիդ կրից հուր :
 Մեր Հայրենեաց դետեր ցաւքան՝ յորդ աղբիւրներն չմնաց ջուր ,
 Հայաստանի ամուր չէնքերն միձուր դարձուց կաղիդ հուր :
 Վան չի մոռցեր իւր կոտորած , որ ջնջեցեր դու մէկէն ,
 Հազար հազար մարդ ու կնիկ՝ վար ձգեցիր 'ի բերդէն .
 Քանի՞ ծնողք դառն սգով՝ դու լացուցիր զուր 'ի զուր ,
 Անպարտ արեանց չը կտացաւ անողորմիդ կտրուն սուր :
 Չորս կողմն ամէն տիրեց՝ պատեց անօրինիդ զրոյց լուր ,
 Տոսպայ միջն ալ դեռ առակ է « թէ հա՛ կուգայ Լանկ թամուր » :
 Այդ քո տուած լլկանք՝ տանջանքն քարերն անգամ լացուցին .
 Արդեօք մարդոյ սիրտ չըստացար՝ թէ՛ քեզ ծնաւ հողածին :
 Ասոր ոճիր ես չեմ կրկներ որ կայ 'ի ծոց պատմութեան ,
 Չոր կը պատմէ երկար երկար Մեծոփեցի սուրբ թովմայն :

Ի՞նչ տարար հետ արիւնարբո՛ւ , բայց լոկ նգովք՝ թուք և մուր ,
Գազանային ինչո՞ւ հապա՛ վարս ըստացար անհամբոյր :
Թաթար , Պարսիկ բռնաւորներ , Շահ Իսմայիլ Ճինկիզ խան ,
Տեսէ՛ք ինչպէ՞ս մխրաթաւալ հողերուն տակ կորուսան :
Ասոնք երբոր գունդ կազմելով՝ արշաւէին Հայաստան ,
Մեր խեղճ նախնիք նեղ մնալով՝ չորս դէհ՝ փախան ցիր ու ցան :
Հայաստանի ծուխ մուխ մարող՝ աշխարհաւեր Շահ Աբաս ,
Հայոց չքնաղ օրիորդներ ո՛հ , թափեցիր գետ յերասխ :
Գուն ալ մեռար ու թաղուեցար , հրեղէն գետին եղեր կուր :
Չարիքներուդ ետքէն՝ զատ զատ վեհ՝ Դատողին հաշիւ տուր :
Թողում ապա այս դարուս մէջ՝ Նարոյէոն Պօնաբարթ ,
Որ արիւնով լուաց երկիր՝ շատին եղեւ մահուան կարթ :
Ետք ախամայ արսոր գնաց սուրբ Հեղինէ չոր կղզին ,
Հառաչելով հանեց հոգին՝ կարօտ մնաց Յրանսային :
Ասոնց պէս ալ պերճ թագաւորք՝ շատ կողմերու տիրեցին ,
Բայց վերջ իրենց աթոռտ և թագ թողին՝ տապան գնացին :
Հազարաւոր քաջ իշխաններ աշխարհիս մէջ ճոխացան ,
Շուտ ծաղկի պէս թառամելով՝ մահուան հողմով վերջացան :
Ասոնք ամէն ունէին շատ՝ քաղաք՝ պալատ՝ բերդ ու գեղ ,
Աւաղելով թողին զանոնք՝ իրենք մտան խրճիթ նեղ :
Սնթիւ ապա արք անուանիք՝ պուէտ՝ սպայ և ոսմիկ ,
Օրհասի դառն բաժակն խման՝ ախամայից մուռն՝ լուկ :
Այս բաժակէն ո՛վ որ խմեր՝ սիրտն աշխարհէն կտրեր է ,
Հինգ վեց կանդուն կտաւ միայն՝ առեալ տապան դիմեր է :
Գնացին գնացին ասոնք գնացին՝ կարգն եկաւ մեզ երթալու ,
Որ այսպէս է միտ չղնենք սուտ ասուորս մնալու :
Ուրեմն մեք եւս դիտցած լինիմք՝ մեզ չի մնար այս աշխարհ ,
Ճամբորդ եմք ո՛հ , պիտի երթանք՝ պէտք է մեզի շատ պաշար :
Արթուն մնանք և աղօթենք , լալով զՏէրն աղաչենք ,
Որ սուրբերուն հետ միատեղ՝ երկնից հարսնիք վայելենք :
Ապա եթէ անհոգ մնանք՝ լապտերներուս իւղ չ՛կազմենք ,
Չուր տեղ պիտի հետ յիմարաց Արքայութեան դուռն զարնենք :
Այս դէհ՝ եթէ Տէր չ՛սիրենք ուղիղ սրտիւ ջերմեռանդ ,
Այն կողմն ապա այժերուն հետ՝ պիտի երթանք անել բանտ :
Թէ որ անտէն արեւու տակ՝ դաշխարհ սիրենք խնդագին ,
Վախ վերջ լալով պէտք է դիմենք՝ անլոյս խաւարն արտաքին :
Եթէ միայն յուտենք խմենք՝ միշտ մեր մարմին պարարենք ,
Ինչպէս կասէ Նարեկացին՝ յետոյ որդանց կեր կանենք :
Աստէն թէ որ Ղաղարներուն՝ մեր սեղանէն մաս չտանք ,
Մէկալ դէհ՝ ո՛հ սրտպակելով՝ առ Արբահամ կը կարդանք :

Ասդին եթէ հիւանդներուն չլինինք սրտանց վշտակից ,
Անդին ապա հետ ուլերուն պիտի լինինք խմբակից ,
Հոս թէ անյարկ օտար եղբարք՝ տուն չբերենք գթալով ,
Հոն սաստիկ ցուրտ սառնամանեաց պիտի մատնինք դողալով ,
Թէ որ աստէն բանտարկելոց ազատութեան չանենք ճար ,
Հոն ալ Փրկիչ մեզ չի բանար Արքայութեան սուրբ Տաճար :
Այրեաց՝ որոց թէ աստ չանենք արդարապէս դատաստան ,
Անդ Տիրոջ դէմ կորագլուխ մնանք առանց պատասխան :
Այն ահեղ օր՝ եղբայր եղբօր՝ մայր տղային չի փրկեր ,
Կ'ասէ Դաւիթ հոս վաստակէ՝ մէկալ աշխարհ նստէ՝ կե՛ր :
Խումբք հրեշտակաց հոն չար բարին , մէկ մէկալէն կը դատեն ,
Ոմանց փառաց հասցընելով՝ շատեր մահուան կը մատնեն :
Ոմանց գլուխ Տիրոջ խօսքով՝ դնեն պայծառ պսակ սուրբ ,
Շատերն ալ ո՛հ , ձեռքեր կապած կիջուցանեն խաւար դուբ :
Արդարքն ինչպէս արմաւենի նորաբողոք կը ծաղկեն ,
Եւ չարագործք մոմի նման՝ կրակին դէմ կը հալեն ,
Երջանիկներն սաւառնելով երկնից խորան վերանան ,
Իսկ թշուառներ վա՛յ կանչելով կերթան դժոխք կը դռան :
Իսպաքն արդարոց ընդ հրեշտակաց օրհներն զՏէր յաւիտեան ,
Իսկ մեղաւորք դեւերուն հետ՝ պիտի մաշեն մութ զնտան :
Ասոնք ամէն մեք լսելով՝ փախնենք հեռու մեղքերէն ,
Գուցէ՛ թերեւս մեզ աղատենք սարսուելի դեհնէն :
Գիտենք ամէնքս պիտի մեռնինք՝ ինչպէս մեռան մեր նախնիք ,
Պատրաստութիւն տեսնանք ըշտապ՝ երթանք վերին Հայրենիք :
Չենք մնացական աշխարհիս մէջ՝ չուենք պիտի հող տապան ,
Պզտիկ միջոցս բարի դործենք՝ որով ցնծանք յետ մահուան :
Այսօր եթէ ծերերուն ցուպ՝ կուրաց լինինք առաջնորդ ,
Վաղիւն ապա սուրբ Ռափայէլ ի չուն լինի մեզ ուղղորդ :
Ասդին թէ որ հսկենք հոգով՝ մեր տուն չթողնենք մտնէ գող ,
Այն դեհն ապա չուտով կը լսենք՝ Գաբրիէլի քաղցրիկ փող :
Ներկայիս թէ զընկեր սիրենք , զոր պատուիրէ մեզ Փրկիչ ,
Ապառնին ալ նորա շնորհիւ՝ պիտի չերթանք սառած լիճ :
Այսօր թէ որ աղքատներուն և տնանկաց բրտենք հաց ,
Վաղիւն ապա Տիրոջ մօտէն՝ առնենք բիւր փոխադարձ :
Թէ որ հիմայ բանտարկելոց՝ երթանք սիրով տեսութիւն ,
Հոն իՏեառնէ պիտոր դ տնանք՝ մեր մեղքերուն թողութիւն :
Հիմայ եթէ զԱզգ մեր սիրենք՝ չլինինք վասակ՝ Մեհրուժեան ,
Ետքէն ապա վարդանանց հետ՝ պիտի բազմենք մի սեղան :
Թէ այժմ զոհենք ի սէր Ազգին՝ մեր անձն՝ մեր գանձն միաբան ,
Մեզ պարագլուխ հոն կը տեսնանք ասպետ Սահակ և վահան :

Այս միտ բերենք հայրենատեացն այն անիրաւ վեստ Սարգիս ,
 Ար զմեր Անին մատնեց Յունաց՝ խաւար բերաւ խեղճ Ազգիս :
 Սորա ներհակն հայրենասէր Պահլաւունի նահատակ ,
 Պաշտպան մնաց իւր հայրենեաց՝ թափեց կարմիր իւր կայլակ :
 Ասոնց գործեր մեք բաղդատենք՝ ընտրենք բարին՝ ՚ի շարէն ,
 Բարին առնենք՝ չարէն փախնենք՝ անփորձ մնանք դժոխքէն :
 Հիմայ թէ որ շահենք զայգիս՝ լինինք Տիրոջ մշակ ժիր ,
 Անդէն պիտի անջինջ գրուինք՝ մեք դպրութեան կենաց դիր :
 Աստ եթէ որ մարմնով ճգնենք՝ և պարապենք աղօթից ,
 Հոն ալ հոգւով մարմնով լինինք՝ փառաց սրբոց պարակից :
 Հիմակուրնէ թէ որ յերկինս՝ դիզենք շուտով մեր ապրանք ,
 Ետքէն երթանք և վայելենք՝ մեր ձեռքերու աշխատանք :
 Կարճն ասեմ ձեզ՝ ՚ի սէր Փրկչին՝ թէ հոս լինինք վշտակիր ,
 Հանդերձեալ օր Քովէն կառնենք՝ իրեն շնորհաց ատատ ձիր :
 Սուր ականջաց այս հերիք է . ով որ ունի թո՛ղ լսէ ,
 Իւր հոգւոյ շահն՝ ապրուստ և ճարն , օրով առաջ մտածէ :
 Ապա այն որ ականջ չունի օձի՛ նման գոցեր է ,
 Անոր քարոզ՝ Աւետարան՝ ամենեւին պիտոյ չէ :
 Այս փոքր խրատ շատ զրքերէ՝ աշխարհիկ բառ փոխեցի ,
 Պառաւնեաց և ծերերաց՝ նստեալ ձայնիւ երգեցի :
 Ես Նահապետ խեղճ Սարկաւազ Փիրղալէմեան Տոսպեցի ,
 Իբր աշակերտ հանրածանօթ Խրիմեան Հօր Մկրտչի :

1859 Նոյեմբեր 16 . Ի վարագ :



ԵՐԳ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ

Բարեկենդան է մեզ այսօր՝ եկայք եղբա՛րք միասին ,
 Այս բարիքներ վայելելով՝ փառք տանք մեր սուրբ Արարչին :
 Թո՛ղ չանցանէ զուր տեղ ՚ի բաց՝ չքնաղ աւուրս յիշատակ ,
 Այլ միասին գողտրիկ երգովք՝ հիւսեմք դիտոյն իւր պսակ :
 Շահպաղիու անուշ դինով իւրաքանչիւր իւր բաժակ ,
 Մատուռակին լցել տուէ՛ք , որ կատարի մեր փախաք :
 Մեր գաւաթներ դարնենք իրար ըզձմամբ սրտի միաբան ,
 Տեսէ՛ք ի՛նչպէս՝ իբրեւ քնար հնչէ նոցա մեզմիկ ձայն :
 Մեր ցնծութեանց լրումն լինի՛ երբ Ազգային պարզ երգեր ,
 Համեղ ձայնիւ մեզ ի գրօսանս՝ թէ յեղյեղեն տղաքներ :
 Այն միջոցին՝ խմենք գինին՝ միմեանց ասենք յոյժ անուշ ,
 Բայց նորա չափ չանցուցանենք , որ չթախանք իբր անյուշ :

Աղբիւն կենաց խոհեր լիք լիք , աղօթս նոցա առնելով ,
 Եւ ունկնդիրքն ասեն ամէն՝ յաջող օրեր խնդրելով :
 Մեր խնդութեանց մէջ միտ բերենք՝ մեր այն աղքատ եղբայրներ ,
 Որ շատերն այժմ՝ չունին հացիկ՝ ախ , ուտելու ի տներ :
 Այն եղիկելիք միտ բերելով՝ մեր բարութեանց փոքր ինչ մաս ,
 Բաժին հանենք լրջմիտ ողբով ինչ որ մեր խիղճ տայ մեզ դաս :
 Սովաւ նոցա ջերմ աղօթիցն՝ արժանանանք խաւովին ,
 Եւ կատարիչ լինինք յայնժամ՝ պատուիրանացն Յիսուսին :
 Նաեւս փութով վարձատրէ՝ միայն հազար փոխարէն ,
 Թէ աստ և թէ հանդերձելուն՝ յամենառատ իւր դանձէն :
 Այս դասն պէտք է մեք միտ պահենք՝ ամէն ատեն սերտելով ,
 Արիւնակից մեր հէգ եղբօր՝ դառն փիճակին զթալով :
 Ճշմարտ չայ՝ պարտ է այսպէս՝ ուրախութիւն կատարէ ,
 Անշուշտ Տէրն եւս զիւր օրհնութիւն՝ նորա գլխոյն կարկառէ :
 Բարեկենդան աւուրց համար՝ գրեց զայս երգ Նահապետ :
 Ո՛վ որ լսէ՝ մի մի բերան՝ իւր ողորմի ասէ սերտ :

1865 Հոկտեմբեր 26 . ի վան



ԴԺԲԱԽՏՏՈՒԹԻՒՆ

Փառք քեզ Աստուած ի՞նչ օրերու հանդիպայ ,
 Նախ ո՛ր էի . մկայ սո՛ր եմ . . . լացս կուգայ .
 Խանի քնջներ պարապ սարապ խեղճ կրակ ,
 Անտէր ձեռ ծոց՝ կպտտեմ անձարակ ,
 Ինչ բանի որ ձեռ զարկիցի չաջողու ,
 Զմէն դեհէն ձախորդութիւն ինձ դիպաւ .
 Մկայ կիտուեմ ճուտի նման հաց բերան ,
 Զիկ բանցուցող մ՝ բայց չեմ գտներ նաեւ զայն .
 Անթութնէս կը նուաղիմ եղիկելիս ,
 Գիծարացող մը չկայ վերէս վա՛յ , բախտիս .
 Ո՛րի՛ կեղտով անձրս կրոնաչի չարաչար ,
 Գիշեր չում լոս՝ ոչ քուն կայ զիկ՝ ոչ դադար .
 Առանց լըխէֆ նամ սրտ օտէք պառկելով ,
 Հրեղէն օրերս վո՛յ կընցուցեմ ա՛խ վախով .
 Մաշտե՛մ վանցուցն ո՛վ անիծե որ ըսպէս ,
 Ուրենց երկրէն ցիր ցան կենէն գէն ու դէս :
 Պանդխտութեամբ օտար աշխարհ շատ աւարի ,
 Իցոր ինոր դուռն աշխատեն զէս գերի .

Բան Աստուած թայ՝ շատերն տե՛ս ի՞նչը քեաշ կուգան ,
Ստամպուլայ մէջ շարան շարան խանէ խան :

Քառթու հացի դէմ ա՛խ կանեն խղճալիք ,

Բայց տուող չիք , ի՞նչու չունին մի սլիկ .

Տէ՛ր երկինքէն իրիշկի՛ տե՛ մեր ցաւեր ,

Տե՛ ու դթա՛ , խղճա՛ խղճուկ Վանցիներ :

Աջողում տո՛ւր բան մը գնտնե՛ք աշխատենք ,

Իցէ՞ դիւր մ՛էլ՝ Վա՛նայ սուրբ հող համբուրենք .

Երթանք տխմանք՝ մեր Հայրենիք խէր ու մէր ,

Ըստեփ մեռնենք՝ քո կամքն օրհնեալ լինի Տէր :

1861 Մարտ 6 . Կ . Պոլիս

ԹՇՈՒՍ.Ռ ՀԱՅՈՒՀԻ ՄԸ

Մաշտէ՞մ իրիկս մկայ տոր ի ,

Ո՛ր խանի քիւնջ կծկուեր ի .

Ուր խեղճ կնիկ միտ կրերի՞ ,

Թէ ջիփ ջիփ ա՛խ գիկ մուցեր ի :

Գիշեր չուր լոս ես ինքն ապով ,

Կուլամ՝ կուրցաւ աչքերս լալով ,

Որբէվէրու պէս նստելով ,

Կընցուցեմ օրս ա՛խ ու ցաւով :

Տարին ընցաւ թուղթ չի գրե ,

Լոկ բարեւէն զրկեր ի մե .

Ի՛նչ շար պէրան գիկ անիծե .

Որ Փոխան ուր Սրբիկ մուցե :

Աստրծու սէր կսիրես Փոխան ,

Դառցի արե՛ Վան վէր քո տան .

Խեղճ Սրբիէդ լաց ու շիւան ,

Սրբի՛ ըստեփ՝ դէ՛ր դերեզման :

Թէ որ չիգաս ես ցաւերով ,

Գիցի՛ կմեռնիմ Փոխան շոտով .

Ի՛նչ շահ՝ որ դիւ առանց Սրբիկ ,

Խեղճ կէլնես քո ճիծ պժերով :

1861 Յունիս 12 . Կ . Պոլիս

Այս քով շարք ցաւ է
Վաւարացի Գրեցի Ս. Բ.

ԱՐԲԵՑՈՒԹԻՒՆ

Արբեցութիւն ի՞նչ գէշ բան է ,
Որ խմողներ կխենդացնէ .

Սա համեստ մարդ կլրբացնէ ,
Նովաւ այլոց գլուխ ցաւցընէ :

Քիչ խմողին գինին անուշ ,
Ով շատ խմէ կլինի անյուշ (1) :

Մի երեկոյ ես մէջ ֆոթայ ,
Պանդուխտ նստած մի ցուրտ օտայ .

Սենեկիս կից գինետուն մը կայ ,
Որ շատ մարդիկ առ ինքն կորսայ :

Խումբ մ'արբեցող բազմեր ահա՛ ,
Խմեն գինին իրար վրայ .

Խորդ ձայներէն գլուխս կտքայ ,
Խօսածիս է Արսէն վկայ :

Մէկն անճոռնի պոռայ կանչէ ,
Չայն լսողաց ունին կըծակէ .

Մէկն գո՛գ թէ նոր խենդացեր է ,
Շիշ և գաւաթ կը կոտորտէ :

Մին բաժակ ձեռն առեր կոնծէ ,
Ընկերն անուշ լինի ասէ .

Միւս ոմն ինչ որ գլխէն փչէ ,
Նստեր անհամ զրոյց կանէ :

Սոցա արարք ո՞ր մէկն ասեմ ,
Եւ կամ որ մին ի գիր առնեմ .

Աղէկն այն է՝ ո՞ր կարճ կապեմ ,
Եւ ոչ իւրեանց գէշ վարք պատեմ :

Երկար միջոց սպասեցի ,
Երեք Մասիս դիւի կարդացի .

Թողուն կերթան տեղերն ասի ,
Քիչ մի գլուխս կհանդարտի :

Մեր մոմն հատաւ այս միջոցին ,
Մութն իշխեց ո՛հ մեր սենեկին .

Կանչեն պոռան անոնք անդին ,
Չեն կարեկցիր մեր վիճակին :

(1) Այս երկու տող ամեն տան վերջ կարգալու է :

Կուզեմ կարգալ բայց մում չկայ ,
Պառկիմ ցուրտ է՝ քունս ոչ գայ ,
Ո՛հ ի՞նչ փորձանք էր որ անկայ ,
Տէր կաղաչեմ խղճոյս գթա՛ :

Ձերկարցնենք սխալայ հիմի ,
Ի՞ցէ թէ քունս տանէ ասի .

Երբ՝ ի՞նչ խօսք է , ե՛րբ կլինի ,
Խաղ՝ ճիշ մարդոյ քուն կբերի՞ :

Քինի՛ գինի՛ այդ ի՞նչ կանես ,
Քեզ սիրողներ ճամբէ՛ հանես .
Վատուծն առիւծ դարձուցանես ,
Համբի բերան լեզու դնես :

Երբ որ ծառայն և աղախին ,
Սէր ձգենք քո շիշ՝ գաւաթին .
Այնուհետեւ տէր և տիկին ,
Նոյնք կը տեսնաս այն միջոցին :

Որքա՛ն չարիք դու աշխարհի ,
Հասուցեր ես անգութ գինի՛ .
Հերովդէս մինչ խմեց քեզի ,
Սուրբ Յօհաննէս մատնեց դահճի :

Քեզ թող խմեն գինի ճերեր ,
Կամ վշտասիրտ տրտում մարդեր .
Որ մէկն տարիք՝ մէկն իւր ցաւեր :
Մոռանալով կտրեն ձայներ :

1861 ֆետրվար 26 . ի ֆոթի

ԱՌ՝ ՎՇՏԱՅԵԱԼ ԲԱԶՈՒԿՆ ԻՄ ԵՂԵՐԳՈՒԹԻՒՆ

Ի մահիճս իմ անկեալ դնիմ ցաւադար ,
Չունիմ ծնող , որ զիս պահէ մայրաբար .
Տանջիմ վշտօքս օր ըստ օրէ չարաշար ,
Բուժեա՛ զցաւս Տէր իմ գթած՝ Բարեբար :

Մարմին իմ էր երբեմն աղատ իղեղոց ,
Բազուկ իմ աջ այժմիկ եղեւ տուն ցաւոց .
Հետզհետէ բուսուցանէ զնոր նոր խոց ,
Որով նեղիմ մինչեւ իսպառ ի բռնոց :

Ամենակալ բարի Բժիշկ՝ ո՛ղորմած ,
Զտառապեալ շնչին ծառայող ի միտ ա՛ծ ,
Նայեա՛ առ իս ոլորմութեամբդ Տէ՛ր դթած ,
Ողջ արա՛ զիս՝ որ նեղելոց ևս Աստուած :

Բոտեմ ի Քէն գաղաշանացս ձայն իմ լուր ,
Զբազկին իմոյ բժշկութիւն մաղթեմ տուր .
Ապա եթէ անտես առնես՝ կեալս է զուր ,
Զի կիզելով լափէ զմարմինս՝ որպէս հուր :

Տեռատես կին ի սուրբ քղանցդ մերձեցաւ ,
Իսկոյն զանձամբ առողջութիւն զգեցաւ .
Նեղիմ և ես այամիկ՝ վշաօքս որ դիպաւ ,
Տե՛ս Տէր զբազուկս քանի՞ խոցով խոցեցաւ :

Ի բաց բառնալ զցաւս յինէն աղաչեմ ,
Երես ի հող եդեալ Փրկչիդ պաղատիմ .
Երբ կսկծմամբս ի խոր խոցիմ հառաչեմ ,
Աւա՛ղ , և ողբ ինձ թշուառիս լամ՝ ասեմ :

Բարուն բարի Ամենողորմ՝ մարդասէր ,
Այց արա՛ յիս՝ ի մեղաւորս հզօր Տէ՛ր .
Զունիմ ես ոք ինձ օժանդակ՝ կամ անաէր ,
Լե՛ր ինձ Բժիշկ բժշկեա՛ զվերս՝ արա՛ սէր :

Պղորմելով զգօսացեալ ձեռն բուժեցեր ,
Ուրախ՝ զուարթ առ ընտանիս դարձուցեր .
Նեղիմ և ես ահա՛ ցաւօքս վշտաբեր ,
Բժիշկ ճարտար անարժանիս հայցեմ լե՛ր :

Սաստկահառաջ աղաղակին բորտոաց ,
Փութով լուար զձայն խղճուկ եղկելեաց .
Նոցին նման տուր Տէ՛ր զգարման իմս վշտոց ,
Խցէ՞ թերեւս ի տանջանացս զերձ գտայց :

Ի քեզ անձն իմ այս ցաւն օգուտ շահաբեր ,
Փոքր մի կա՛ց դու ի նեղութիւնդ և համբեր .
Յիշեա՛ զՅօբ երանելին և լուռ լե՛ր ,
Զի գիտէ Տէր պարզեւել քեզ նոր օրեր :

1859 Յունվար 24. Կ. Պօլիս Մ. Եստեֆանոս :

Գ Ա Ր Ո Ւ Ն

Լեռ ձոր ու դաշտն ամէն բայցուան ,
Բարձր սարերաց ձներ հալան ,
Կակաջ՝ նավրուզն անս ծաղկեցան ,
Աւետաւոր եղեն դարնան :
Մարտի բսան դարնան նշան ,
Մեր վիշա ու ցաւն որսէ՞ս անցան (1) :
Հովիւն առեր ոչխար կերթայ ,
Թըռվըռալով կանչին վերայ .
Աղբիւրին մօտ նստեր ցնծայ ,
Ձիւնահալած դարնան վերայ :
Իւր հովուական փող կը փչէ ,
Պաղ ջուր խմած՝ կարօտն առնէ .
Առուի ափէն դաղձ կը քաղէ ,
Հետ աղ հացին անուշ կանէ :
Հողագործն էլ եզներն առեր ,
Գեղէն ելեր վազէ արտեր .
Կանչէ ձայնով քաղցրիկ խաղեր ,
Իւր արծաղանք բռնեն սարեր :
Ակօս ակօս գետին հերկէ ,
Ձէթ ձէթ ցորեն մէջ կը ցանէ .
Ափով արափին կը հաւսարէ ,
Մէկ ցորնի տեղ՝ հարիւր կառնէ :
Սարակ դրեր բաճն իւր թեւին ,
Երթայ՝ փորէ կորթ պինդ ափնին .
Իրիկվընէց անուշ գինին ,
Կործէ՝ մոռնայ խօնջ ցորեկին :
Պարտիզպան իւր մշակներով ,
Ածուք շիտկեն յարմար ձեւով .
Աղբ կը դարնեն կողով կողով ,
Որ սոխ կաղամբ ելնեն յողով :
Վաճառական բեռներ բարձեր ,
Տարեալ ծախէ օտար տեղեր .
Գրաստներու զանկի ձայներ ,
Ի՞նչ զուտ լսեն ականջուճք մեր :

(1) Այս երկու տող ամեն ամեց վերջ կարգալու է :

Նաւապետն էլ հետ նաւաստեաց ,
Պատրաստին չու ծովաբնաց .
Բերքն այլեւայլ գիւղ քաղաքաց ,
Տարեալ փոխեն հետ միմեանց :
Կռիւ սիրող թագաւորներ ,
Ձեզ աչէին գարնան օրեր .
Չուր տեղ պիտի խեղճ գինուորներ ,
Իրենց արեամբ ներկեն դաշտեր :
(Հարուստ մարդիկ փողի տէրեր ,
Շատ ոսկիով գնեն գեղեր .
Յորեն հանեն բարձր գներ ,
Միտ չեն բերեր որբ՝ աղքատներ :
Շատ պարտատէր դժբաղդ Հայեր ,
Հացի հոմար ա՛խ , տնտեր . . .
Ելան , փախան օտար հողեր ,
Սուգ ձգեցին կին ու ձժեր . . .)
Չմենոցէն սեւ սարեկներ ,
Թողին դարձան իրենց բուներ .
Ասոնց անուշ դայլայլիկներ ,
Մխիթարեն տրտում մարդեր :
Արագիւններ տեսնուեցան ,
Քո դաշտորայքն վասպուրական .
Ճրնճրղիկներ զուարճացան .
Ինչո՞ւ տեսին իրենց պաշտպան :
Կուռնի զատանց ձայն կը հանէ ,
Անուշ անուշ եղանակի .
Թեւեւ արեւու դէմ տարածէ ,
Առ ինքն պշնող զմայլեցնէ :
Ճախրակ մանող դեղին թռչուն ,
Առաւօտմէ մինչ իրիկուն .
Խօսէ քաղցրիկ իւր ճրովըղիւն ,
Մէջ ուռենի խիտ ծառերուն :
Հայրենասէր կռիկ՝ անձեղ ,
Որ մնան վան իւրեանց բուն տեղ .
Հայաստանի քաղաքն ու գեղ ,
Միշտ զարդարեն այս երկու ցեղ :
Մարտի ամիսն երբոր հասնեն ,
Բարտի ծառի գլուխն վաղեն .
Բոյն շինելու սկիզբն առնեն ,
Կլու կլու ձայնով զԱստուածն օրհնեն :

Չեզ կը սիրեն դարնան օրեր ,
Բոլոր երկիր , գեղ , քաղաքներ •
Անրան թոչունքն՝ անասուններ ,
Ծառ դաշտորայքն և ծաղիկներ :
Էջ կը զուայ՝ ձին խըրխնջայ ,
Կովու որթիկ մօր կը սուայ •
Գառն մաքույ դէմ կայներ խաղայ ,
Մեզ աւետեն գարուն կուզայ :

ԲԱՐԵԿԱՄՔ ՏՈՍՊԵՑԻՈՅՆ

Փախաւ ձմեռն գարուն եկաւ ,
Երկիրն ամէն զուարթացաւ •
Հէգ Տոսպեցի՝ ի՞նչ է քո ցաւ ,
Ար քո սիրտն էլ չուրախացաւ :
Մարտի քսան գարնան նշան ,
Խեղճ Տոսպեցի ցաւդ է՞ր ցանցան :

ՏՈՍՊԵՑԻՆ

Շատ գարուններ եկին զնացին ,
Աւա՛ղ նոքա մեզ խարեցին •
Ո՛ւր են մեր հարքն , ո՛ւր մնացին ,
Չմոռնար զիրենք հէգ Տոսպեցին :
Մարտի քսան գարնան նշան ,
Մեր նախնիքներն եկին անցան :
Հաղարաւոր բարեկամներ ,
Երբեմն էին նոյնք մեզ ընկեր ,
Այժմ գացել են գերեզմաններ •
Հող կարել են ոտնէն ի վեր :
Մարտի քսան գարնան նշան ,
Մեր նախնիքներն եկին անցան •
Պէտք չէ մեզ ո՛ր եղբարք սիրուն ,
Սիրենք սա կերպ փախչող գարուն •
Մօտիկցեր մեր հոգւոյ գարուն ,
Տեառն Յիսուսի սուրբ Յարութիւն :
Մարտի քսան գարնան նշան ,
Ծաղկազարդի և Յարութեան :
Մեծի պահոցս ապաշխարենք ,
Մեր հոգւոյ ցաւ Տիրոջն յայտնենք •
Չերմ հաւատով առ ինքն դիմենք ,
Տո՛ւր մեզ կենաց Հացդ թախանձենք :

Մարտի քսան գարնան նշան ,
 Մազկապարդի և Յարութեան :
 Ըստ հրամանի Յիսուս Փրկչին ,
 Պէտք է սիրենք նախ մեր հոգին .
 Չմտնանք մեր Ազգն՝ յարգ ծնողին ,
 Յայնժամ ցնծայ խեղճ Տոսպեցին :
 Մարտի քսան գարնան նշան ,
 Հեզ Տոսպեցւոյ ցաւեր պակասն :

1860 Մարտ 15 . ի վարազ

Կիրակոս Բեւեռնի Կաթողիկոս
և Երեմիա Կաթողիկոս


ՊԱՏՈՒԼԵՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ԱՌ ՅԱՊԱՏՍ

Չեռտ գծողիս ի հոգ դառնայ ,
 վճռաւն՝ զոր ետ էնն Ադամայ .
 Բայց ՏԱՂԱՏԵՏՐՍ յետ ինձ մնայ ,
 Յինէն քարոզ յորդիս Հայկայ :
 Ուշիմ եղբայր բե՛ր ունիդ առ իս ,
 Լու՛ր փորձառու խրատատուիս .
 Յիշեա՛ զվախճան զանցաւորիս ,
 Սիրեա՛ դՏէ՛ր՝ գործեա՛ բարիս :
 Միտ բե՛ր դու զիս՝ զի քեզ նման ,
 Յազցաւոր կեանս եկեալ եմ ման .
 Ներկայս ահա՛ ի գերեզման ,
 Երթ և եկիցն լինիմ կոխան :
 Ուրեմն կազմեա՛ հոգւոյդ պաշար ,
 Չի մնայ ոչ քեզ այս աշխարհ .
 Յաւուր միում քեզ եւս եղբայր ,
 Մահն ամէ՛ փոյթ յայս տխուր վայր :
 Արդ՝ ի կեանս քո դու ըստ կարի ,
 Լե՛ր հոգեսէր հեզ և արի .
 Մարմնուոյդ կամաց հնազանդիւր մի՛ ,
 Թէ ոչ լինիս Տեառնդ թշնամի :
 Մինչ ընթեռնուս զայս երկտող բան ,
 Ո՛վ բանասէրդ իմ պատուական .
 Ինձ Ղեւոնդիս Փիրզալէմեան ,
 Տո՛ւր զողորմի դու մի բերան :

1867 յունվար 20 յՍխալանց ի վան :







18984

2073.

